ՍՈՒՐԵՆ Շ. ՎԱՆԵՑԻ

ՄԵՐ ՄԵԾ ԲԱՑԱԿԱՆ

Վշտակոծ սրտով և առ Ամենաբարձրյալն ուղղված մեր լալահառաչ աղոթքներով է, որ այսօր մենք պետք է բանանք մեր էջը։ 1994 թվականի օգոստոսի 18-ին, ժամը 7.15-ին, իր արգասավոր կյանքի 86-րդ տարում, Երևանի իր հայրապետական առանձնատանը, երկարատև ու ծանր հիվանդությունից հետո ի տեր հանգավ Ամենայն Հայոց Կաթողիկոս և Ծայրագույն Պատրիարք, Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի պատվավոր անդամ, Հայաստանի անկախ հանրապետության առաջին ազգային հերոս Տեր Տեր Վազգեն Առաջինը։ Անչափելիորեն մեծ է որբացած հայ ժողովրդի վիշտը և մեծապես անընդգրկելի այդ վշտի անհատակ խորությունը։

... Ծնվել է 1908 թ. սեպտեմբերի 20-ին, Ռումինիայի մայրաքաղաք Բուխարեստում, արհեստավորի ընտանիքում և եղել է կոշկակար հոր՝ Աբրահամ Պալճյանի և ուսուցչուհի մոր՝ Սիրանույշ Մարգարյանի միակ զավակը։ Ավարտելով Բուխարեստի գերմանական «Եվանգելիշե շուլե» քառամյա (1920-24 թթ.), և ապա հայկական «Առևտրական բարձրագույն վարժարան» (1924-28 թթ.) ուսումնական հաստատությունները, Լևոն-Կարապետ Պալճյանը՝ այդպիսին էր Վեհափառ Հայրապետի ավազանի անունը, 1932 թ. դառնում է Բուխարեստի պետական համալսարանի գրականության և փիլիսոփայության ֆակուլտետի ուսանող, որն ավարտում է 1936 թ., ստանալով ուսուցիչ-մանկավարժի դիպլոմ։ Ինչպես տեսնում ենք, աշխատանքային և հասարակական գործունեության լայն հորիզոններ էին բացվում քսանութամյա երիտասարդի առջև, մանավանդ որ ինքը՝ Լևոն-Կարապետ Պալճյանը, արդեն սկսել էր իր եռանդուն գործունեությունը ռումինահայ համայնքի թե մտավոր, և թե հասարակական կյանքում։ Սակայն երիտասարդին ավելի հետաքրքրում էր հոգևորական գործունեության բնագավառը։ Հետևանքն այն եղավ, որ 1943 թ. սեպտեմբերին Աթենքում, տեղի հայկական «Սուրբ Կարապետ» եկեղեցում Լևոն-Կարապետ Պալճյանը ձեռնադրվում է քահանա, վերանվանվելով «տեր Վազգեն», մի

անուն, որը վերցված էր ի պատիվ ազգային-հասարակական գործիչ, բանաստեղծ Վազգեն Տերոյանի։

Հոգևոր գործունեության ճանապարհն արդեն սկսված էր։

Հետագա տարիներին ծավալած ամբողջ գործունեությունը Վազգեն վարդապետի, ապա՝ Վազգեն ծայրագույն վարդապետի (1948 թ. մայիս), Վազգեն եպիսկոպոսի (1951 թ. մայիս) համար իր ժողովրդին բոլորանվեր ծառայելու, նրան իր մտավոր ու աշխատանքային-հոգևոր կարողությունները մինչև վերջ ի սպաս դնելու տարիներ հանդիսացան։ Հաջորդաբար հրատարակված նրա «Անձնավորության գաղափարի մասին» (Բուխարեստ, 1938 թ.) պատմա-փիլիսոփայական ուսումնասիրությունը, «Մուսա լեռան հայերը Ֆրանց Վերֆելի վեպին մեջ (վերլուծական փորձ)» գեղագիտական-գրականագիտական «քննաբանությունը» (անդ, 1945 թ.), «Խրիմյան Հայրիկ որպես դաստիարակ» (անդ, 1943 թ.) տեսական-մանկավարժական աշխատությունը, «Մեր պատարագը» կրոնա-աստվածաբանական մենագրությունը և էլի ուրիշները գալիս են մեր ասածն ապացուցելու։ Այդ աշխատությունները բազմիցս վերահրատարակվելու բախտին են արժանացել, թարգմանվել են մի քանի լեզուներով և ամենուրեք արժանացել ընթերցող ու գիտական հասարակայնության դրվատանքին։ Եվ եթե սրան էլ ավելացնենք, որ սկսած 1933 թվականից «այդ ընդունակ և բանիբուն երիտասարդը» (Հակոբ Սիրունի) ինչպես տեղական՝ ռումինական ու ռումինահայ, այնպես էլ արտասահմանում հրատարակվող հայկական պարբերականներում հանդես էր գալիս հայերեն ու ռումիներեն լեզուներով գրված հրապարակախոսական մեծարժեք հոդվածներով՝ «Կ.Պ.», «Լ.Կ.», «Լ.Կ.Պ.», «Լևոն», «Լ.», հետագայում՝ «Վազգեն վարդապետ», «Վազգեն եպիսկոպոս», ապա՝ «Վազգեն Ա., Կաթողիկոս Ամենայն Հայոց» ստորագրություններով, – հրապարակախոսական եռանդուն մի գործունեություն, որը նա ծավալեց իր ամբողջ արգասավոր կյանքի ընթացքում, - ապա մեր ասելիքը կամբողջանա։

1955 թվականի սեպտեմբերին, Սուրբ Գրիգոր Լուսավորչի աստվածակառույց գահը ժառանգած Վազգեն կաթողիկոսի համար սկսվեց հոգևոր-հասարակական բնույթի

աշխատանքների աննախընթաց ծավալման մի նոր ժամանակաշրջան։ Չնայած իր համեմատաբար երիտասարդ՝ 47 տարեկան հասակին, Վազգեն նորընտիր Վեհափառը պլանավորում է Հայաստանում և Սփյուռքում գործող շուրջ հարյուր եկեղեցիների ու պաշտամունքային այլ հաստատությունների՝ մատուռներ, աղոթատեղիներ, մասնակի կամ հիմնովին վերանորոգման աշխատանքները, որը Մայր Աթոռի ճարտարապետական հանձնաժողովը Արծրուն Գալիկյանի նախագահությամբ, հետևողականորեն սկսում է իրականացնել առաջին իսկ օրվանից, ընդհուպ մինչև այժմ։

1961 թ. հոկտեմբերին Մայր Աթոռի նորաշեն տպարանի բացման հանդիսավոր արարողությամբ, հիմնավորապես կարգի է դրվում հրատարակչության գործը և «Էջմիածին» ամսագրի հրատարակչությունը։ Սրա հետ միաժամանակ լայն աշխատանքներ են տարվում գիտա-աստվածաբանական շնորհալի կադրեր ստեղծելու և նրանց այդ բնույթի աշխատությունները «ի տիպ արձանացուցանելու» կապակցությամբ։ Տպարանի տնօրինությունը, Վազգեն Ա. Կաթողիկոսի անմիջական նախաձեռնությամբ, շուտով գործարար կապեր է հաստատում արտասահմանի համաբնույթ հաստատությունների հետ (ֆրանսիական «Գալլիմարի», ֆիննական «Էրեբունի») և այսպիսով համապատասխան բնույթի մասնագիտական գրքերի ու ալբոմների հրատարակության հարցը նոր ծավալ ու բովանդակություն է ստանում։

Իր նոր և ըստ ամենայնի ավելի լայն գործունեությունն է ծավալում Մայր Աթոռի կրթական հաստատությունը՝ Էջմիածնի հոգևոր ճեմարանը։ Համալրվելով գիտա-մանկավարժական նորանոր ուժերով, ուսանելու համար շնորհաշատ պատանիներ ընդունելով թե՛ Մայր Հայրենիքի, և թե՛ սփյուռքի ամենալայն ու ամենահեռավոր տարածքներից՝ Պարսկաստան, ԱՄՆ, Թուրքիա, Լիբանան, Էջմիածնի հոգևոր ճեմարանը պարբերաբար տալիս է իրենց կոչմանն արժանի բարձրորակ հոգևոր կադրեր։ Ավելացնենք, որ այդ ճեմարանում, արդեն երկար տարիներ «Հոգեբանություն» առարկան դասավանդում է ինքը՝ Վեհափառ Հայրապետը։

Իսկ քանի որ Նորին Սուրբ Օծության աշխատանքային կարգավիճակի անբաժանելի մասն է կազմում ազգային արժեքների ու մեծությունների, համազգային

նշանակություն ունեցող երևույթների՝ Հայրապետական բարձրագույն մակարդակով գնահատումն ու արժեքավորումը, ապա այս ասպարեզում էլ արվածը ավելին ցանկանալու համար հիմք չի տալիս։ Ապրիլյան եղեռնի և Սարդարապատի ճակատամարտի 50-ամյակների առթիվ Հայրապետական կոնդակները (1965 թ. ապրիլի 24 և 1968 թ. մայիսի 26), Մկրտիչ Խրիմյանի ծննդյան 150-ամյակը ըստ ամենայնի նշելու մասին ուղերձ-հրահանգավորումը (1970 թ. նոյեմբերի 26), Պարույր Սևակի ողբերգական մահվան առթիվ տրված ցավակցական հեռագիրը (1971 թ. հունիսի 8), ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանի մահվան առթիվ տրված ցավակցական կոնդակ-բնութագրականը (1972 թ. մայիսի 10), ամերիկահայ արձակագիր Վիլյամ Սարոյանի ծննդյան 70-ամյակի առթիվ տրված ուղերձ-կոնդակը և այլն, հիանալի ապացույցներ են, որ Վազգեն Վեհափառը միշտ էլ քայլել է ժամանակի գրական-հասարակական և մշակութային կյանքի հետ համաքայլ։ Այսօր Նորին Սուրբ Օծության՝ համանման հարցերի առթիվ տրված կոնդակների թիվը արդեն անց է երկու հազարից, իսկ բնաշխարհի և սփյուռքի հայության ամենատարբեր բնագավառների ներկայացուցիչներին ուղարկված նամակների, ուղերձների, շնորհավորական հեռագրերի ընդհանուր թիվը մոտենում է քսան հազարի։

Պակաս նշանակալից չի եղել Վազգեն կաթողիկոսի ազգապահպան գործունեությունը վերջին շրջանի հայ-ադրբեջանական հարաբերությունները կարգավորելու ուղղությամբ։ 1988 թ. փետրվարի 5-ի Հայրապետական հեռագիրը Միխայիլ Գորբաչովին «Լեռնային Ղարաբաղի հարցը օրինավոր լուծելու առթիվ», մարտի 13-ին Սումգայիթի զոհերի հիշատակին նվիրված սգո հանդիսավոր հոգեհանգիստն ու այդ առթիվ Հայրապետական ելույթը, նույն թվականի հուլիսի 17-ին Հայրապետական երկրորդ նամակը Միխայիլ Գորբաչովին, Լեռնային Ղարաբարի կարգավիճակի հետ կապված նույն հարցով, օգոստոսի 1-ին Վեհափառ Հայրապետի ուղևորությունը Մոսկվա և մեկ ժամ տևած հանդիպումը Պ.Ս.Դեմիչևի հետ, «որտեղ քննարկվել է Ղարաբաղյան հիմնահարցը», 1989 թ. դեկտեմբերի 8-ի Հայրապետական երրորդ հեռագիրը Մոսկվա՝ Միխայիլ Գորբաչովին, դարձյալ նույն՝ Ղարաբաղյան խնդրահարցով, մեկից ավելի նամակներն ու հեռագրերը ուղղված Միավորված Ազգերի

կազմակերպությանը, Անդրկովկասի կրոնապետների ժողովին, ԱՄՆ-ի պրեզիդենտ Ռոնալդ Ռեյգանին և այլն, նորից գալիս են ապացուցելու, որ հայոց Առաքելական եկեղեցին և նրա հոգևոր Առաջնորդը իրենց կոչման բարձրության վրա էին նաև այս հարցում։

Եվ չնայած այսպիսի լարված աշխատանքին, դուլ ու դադար չուներ Վազգեն կաթողիկոսի խնկելի գրիչը։ Իբրև հոգևոր-ազգային բանիբուն գործիչ և իր ժողովրդի շահերի պաշտպանության դիրքերում կանգնած սկզբունքային հրապարակախոս, նա անհապաղ հանդես էր գալիս՝ դրվատելու համար այս կամ այն ազգօգուտ գործը, բայց և անողոք ու անզիջող էր «ժողովրդյան վեհ խնդիրները» առուծախի առարկա դարձնողների ու այդ խնդիրները շահատակողների նկատմամբ։ Գրչի ու մտքի որևէ ազնիվ արգասիք, անպայման արժանանում էր Հայրապետական դրվատանքին, գնահատությանն ու խրախուսանքին, բայց և խիստ ու սկզբունքային քննադատության էր արժանանում գրչի ու մտքի այն արգասիքը, որի նպատակը անառողջ կրքերը բորբոքելն էր, ազգային խնդիրները ծուռ հայելու մեջ ներկայացնելը, թացն ու չորը իրար խառնելով՝ «վարկպարազի եզրահանգումներ անելը»։ Այլևայլ պարբերականներում տարբեր տարիներին հրատարակված նրա «Հայ ըլլալ», «Ապրիլի 24», «Մեր հարազատ լեզուն», «Հայրենասիրություն», «Կարոտ հայրենի», «Մի վնասաբեր գիրք», «Ի սեր մեր եկեղեցու միության», «Սուտ է» և այլ հոդվածները, որոնց վերնագրերն իսկ խոսում են նրանց բովանդակության մասին, մեր ասածն ապացուցելու համար հրաշալի փաստեր են հանդիսանում։ Վազգեն կաթողիկոսը առ այսօր հեղինակել է ամենատարբեր բնույթի ու բովանդակության շուրջ երկու հարյուր անուն աշխատություն ու հոդված, որոնք մշտակայուն արժեքներ են մեր մշակույթի պատմության համար։ Այդ գործերի ժողովածուի առաջին հատորը «Գալիքի տեսիլքով» ընդհանուր խորագրի ներքո (կազմողներ՝ Պիոն Հակոբյան, Պարգև Շահբազյան, Սուրեն Շ. Վանեցի) հրատարակվել է Էջմիածնում 1988 թ., իսկ երկրորդը նույն խորագրով (կազմող՝ Սուրեն Շ. Վանեցի), նույն տեղում, 1993 թվականին։ «Գալիքի տեսիլքով» ընդհանուր խորագիրը կրող երկհատորյակում զետեղված է Հայրապետական գրչի արգասիքը հանդիսացող գործերի գերակշիռ մասը։

Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Առաջինի աշխատանքային գործունեության անկապտելի մասն են կազմում աշխարհիս ամենատարբեր երկրներ կատարած նրա մեծաքանակ ուղևորությունները, որոնք ունենում են մեկ հաստատուն նպատակ. տեղում, կառավարական-պետական-հոգևորական բարձրագույն մակարդակով լուծել այն առաջնահերթ հարցերը, որոնք ծառացած են հայ ժողովրդի, նրա հոգևոր ու աշխարհիկ ոգորումների, նրա գիտության ու մշակույթի առջև։ Այս առիթով Վեհափառ Հայրապետի՝ տարբեր ուղևորությունների ժամանակ կայացած գործարար հանդիպումների «ակտիվում» կան այնպիսի հանրաճանաչ պետական գործիչներ, ինչպիսիք են Եգիպտոսի Հանրապետության նախագահ Գամալ Աբդել Նասերը, Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Քրիստիան Պինոն, ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի նախագահ Նիկոլայ Բուլգանինը, հետագայում՝ Միխայիլ Գորբաչովը, Բրազիլիայի վարչապետ Անտոնիո Սալազարը, Ավստրիայի վարչապետ Գորբախը, Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսին, հետագայում՝ Պիմենը, Հնդկաստանի վարչապետ Ջավահարլալ Ներուն, Կաթոլիկ եկեղեցու քահանայապետ Պողոս Զ. Պապը, հետագայում՝ Հովհաննես-Պողոս Ա. Պապը, ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղար ՈՒ Տենը, հետագայում՝ Պերես դե Կուելյարը, ԱՄՆ-ի պրեզիդենտ Ռոնալդ Ռեյգանը և շատ ուրիշներ։

...Մեր հոգելույս Հայրապետի պատգամներից մեկն էլ Աստվածաշնչի հայտնի կարգախոսն էր. «Հավաքվենք մատ առ մատ, բռունցք դառնալու համար»։ Մեր ազգային կյանքի շրջադարձային այս պահին կարգախոս ունենանք Հայրապետական այս պատգամը, որպեսզի մեզ հովանի լինի մեր մեծ հանգուցյալի աստվածահաճո հոգին։ Սրբությամբ պահպանենք այդ կարգախոսը և այդ նպատակասլաց կարգախոսը անբեկանելի երդում դարձրած՝ գլուխ խոնարհենք Ամենայն Հայոց կաթողիկոս Տեր Տեր Վազգեն Առաջինի համբուրելի աճյունի առջև, կրկնելով սուրբ գրքի հայտնի խոսքերը. «Հիշատակն արդարոց օրհնությամբ եղիցի»...

Լրագիր, 1994, № 146, օգոստոսի 24